

Ժ. Քահանայագետք Հայոց մեծաց (տես
վերեւ):

Ժ. Եպիսկոպոսք Կամսարական տան (տես
վերեւ):

ԹԻՒ 42.

Անկիւրիա — Կարմիր-Վանքին մէջ ալ
կային՝ իմ կազմած Սայր ցուցակին համեմատ:
Թիւ 42. Զեռագիրը հաւաքածոյ մըն է
եւ կը բովանդակէ

ա. Կանոնագիրը (ցանկեր, էջ 5—24,
բնագիր, էջ 25—352), որ կը վերջանայ
Աղուանից Սիմեոն կաթողիկոսի կանոնով, որու կը
յաջորդէ ճիւղահամարի վերաբերեալ գրուած-
ներ, էջ 357—384):

բ. Միիթար Գօշի Դատաստանա-
գիրը, էջ 385—654:

տ. Բառագիրք մը, որու խորագրին տեղը դա-
տարկ, էջ 665—718:

Մեծ. 17.4×19.8 սմ., նոտրագիր, գրու-
թեան տեղը, ժամանակը անյայտ, բայց անշուշտ
1609 էն ետքը: Գրիչն է Կեսարացի Պետրոս
երէց, գրուած “ի վայելումն Տէր Պետրոսին”:

ԹԻՒ 232.

Դատաստանագիրը. Մեծ. 20×14.7
սմ. Նոտրագիր, գրիչ՝ Ստեփանոս Երէց, ժա-
մանակ 1639: Միիթար Գօշին անունը ամենեւին
չէ յիշուած Զեռագրիս մէջ:

1915 էն ի վեր ոչ եւս է Կարմիր վան-
քիս Զեռագրաց հաւաքածուն: Այս պատ-
մական վանքին բոլոր հնութիւնները (Զեռագիր,
Տպագիր, արծաթեղին, ոսկեղին, պատկերք
(իւղաներկ), քանդակներ, փայտեղին եւայլն),
իմ անձնական մատենագարանիս եւ գոյքերուս
հետ փնտացան:

Բարեբախտաբար Մայր ցուցակը հետո
առած էի 1913 ին, Անկիւրիայէ ելած ատենս,
եւ այդ կը մնայ միայն իրբեւ Յիշատակարան
Անկիւրիայէն եւ Կարմիր-Վանքէն:

Երրուսաղեմ, 1926, Մարտ 16:

ԱԱԲԳԷՆ ԱԳԻՌՍԿՈՂՋԱՆ



ՊԵՐՍԻԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՅՈՒՂՆԵՐ

ԱՃՈՒՂ ԱԼԻԱՑ ՎԵՐԴՈՒ ԵՐԳԵՑՔԸ

(Տես ՀԱ. 1924, էջ 499:)

7. Միւս երգերը:

ա. Դարարս պարպել է.

Կարարս պարպել է, սասկու չէ գալիս,
Գիշեր յրեք գուրծու ահ ու զար ելաւ.
Զանձն նվազել ա, սիրոս ա լալիս,
Որպէս նորայմանուկ բիղարար ելաւ:

Մատածելով սաղ աշխարքն ջամ արի,
Ուրիշների խօսկով ինձի խամ արի.
Վայ իմ հալին թէ ինչ զուսայ ջամ արի,
Դարդերս շատացաւ մին ամբար ելաւ:

Կանզս մաշացրի օտար աշխարի,
Մեխերս բազմեցաւ հայ տարոց տարի.
Բարութունս տիկ չար ճանայպարի,
Օրերս պարպելով շատ անձար ելաւ:

Ծերութունս ախտել ա, կտրել ա քունս,
Հեկայ կարեղութուն, քաշվեց արեունս.
Վարդան օղին էլ չես տեսնու գարունս,
Եղանակն փոխվեց, էս ինչ դար ելաւ:

բ. Չես յիմացի:

Չես յիմացի սուրբ գըքերի տառերըն,
Կորցրել ես սրտիտ գութ, սխալ ես.
Գիսայ կարթայ, լաւ յիմացի բառերըն,
Որ յիմանաս խօսկիտ նութըն սղալ ես:

Սրտի ավելնորդըն էս խօսի լեզուն,
Ոչ մէջն սոկուռ կայ, ոչ թէ տակըն սուն.
Անկիրապ շատ խօսալ է մարդի բնութուն,
Կէ յայտնվի ամէն սուտըն սղալ ես:

Ես Ալահվերտին եմ, նման եմ օխի,
Մարգարիտ չեմ գառնայ, որ խօզըն կօխի.
Զավայիրս հուլունքի հետ չեմ փօխի,
Դու ճանս չէ լաւ խօզութըն սղալ ես:

գ. Ջեղում ամ:

Ուզում ամ գարդերս աշխարեմ քեզե,
Մանկութեան չուր էսօր էղալին չունեմ.
Ինչ մաջիս որ նստես առայ հետ սաղին,
Որ ամէն յիմանան խօշհալն չունեմ:

Թէ որ դամ անիծեմ իմ հօր ու մօրս,
Մեղքն իմն է, անբաջ չարի քվորս.
Լավ աթլաս ու մօմի կարում ան չորս,
Աղար զառ հաքցնեն ես բալն չունեմ:

Էն մարդն չունեմ, որ զադրս իմանայ,
Որ ծածուկ խորուրդս ասեմ, հասկանայ.
Մակար այս երդիրն բալնէ զիվան ա,
Մին դրիստ դուս գնալ, նի գալն չունեմ:

Վարդան օղի դու յիմացար գանգատսու,
Որ ժամանակ ենի կակնես չէհատս.
Քեզանից էլ ավէլ ում քցեմ գադս,
Գիտես որ ավէլի խեալն չունեմ:

Դ. Այս յունակ աշխարռուն:

Այս յունան փոշ աշխարռում
Ինչ գատեցի զուր գնաց.
Միշի ընթթուն տարում,
Զէ հասկայցայ ուր գնաց.
Ինչ չանացայ որ կարացի,
Դժվար արի, զուր գնաց.
Պամառ որ զարդըն չիմացայ,
Որպէս գարնան ջուր գնաց:

Ոչ օվ չասի ես խէլօք ի,
Որ կիտեցի մալ ու գանձ.
Չախրթութունն որ եկաւ,
Կէ թարի մարթու քէսանջ.
Թէ ուզի իրում չէ դնի,
Կասի տարին է նէհաջ.
Շատուք տեսի, որ ունէին
Միլիօն քուրուր գնաց:

Օվ մարմինն չէ սիրեց,
Ջանացաւ հօդին պայեց.
Մտածեց որ ախիր չկայ,
Վէրջի օրերըն նայեց.
Պարզ երես զնաց գալապատան,
Յաւիդենական շահեց.
Զէ սիրեց զառ ու զառքաղիւ,
Աչկ է խիեց, կուր գնաց:

Վարդան օղի հաբաս տեղըն,
Ինչ ես աչ ու զար անում,
Ընկնում աս զարիպ երկում,
Քեզի գարբէդար անում,
Լաւ մոածէ, տես ապրակն,
Ում մահին է ճար անում.
Քո աչկովըն տեսիր թողուց,
Ախիրն տիսուր գնաց:

Ե. Այս աշխարի:

Այս աշխարհի մէջն ես տարայբազտ ի,
Որ ամէն կոլմանից կարօտ մնացի.
Տեսէք թէ որ էլի ինչ քան չանազտ ի,
Ամէնան ժամ տեղս քարօտ մնացի:

Ծնընդեան վաղտիցս միշի այսօրս,
Օրբատօր պակասեց խելք ու շնորս.
Ծներութունս աղդեց էտ էլ մէ բորս,
Անօդնայիան աչ ու զարօտ մնացի:

Ես ինձ մլախթարօվ օր անձկացրի,
Դարդերս կիտեցի, սրառս մա գրի.
Զունէի բարեկամ, որ յաւս գրի,
Պանդուխտ երկներում սարօտ մնացի:

Վարդան օղի կանջէ Ասոված քեզի եար,
Օքնայկան է քեզի, չի տայ աչ ու զար.
Շարունակ ազթթկա արայ մուղարար,
Ու օվ չասի որ ես եարօտ մնացի:

Ղ. Որ ժամանակ ընդգայ:

Որ ժամանակ ընդգայ մօրս արդանդն,
Ու օվ չէր յիմացի թէ ես դօր ելայ.
Հրամման Աստծու էր, որ ընկնի բանդն,
Զուրի, արեւունի հետ միայոր ելայ:

Միայոր մնացի էն մութը բաղի,
Մնացէլ ի ընդեղ որպէս դութսաղի.
Քառասուն զօր գիշեր չին պէս դուզսաղի,
Ծնչայոր ձկի պէս խաղացոր ելայ:

Խաղէի շարունագ միշի ին ամիս,
Ամբոցաւ ոսկուս վերէն եկաւ միս.
Ին օրինն սէհամթ ու ինն դաղիս,
Ծնան վեցայ, եկայ աշխար, նօր ելայ:

Նոր ելէլի միշի ութ օր շատ լացայ,
Ետով տարան օննաց ջրում լողացայ,
Սուրբ մեռօնի շնօրըն որ ըստացայ,
Երկրուտ ծնընդումն շնայոր ելայ:

Ընդանի, բարէկամ եկան աչկայլոյս,
Ծիծ կախն, կօրէրի ինձ, կանին սուս.
Գիշերն չարչարի մեշի բացվէր լոյս,
Մէկ տարում մօրս ջանին բօր ելայ:

Երկու տարուս չօջ կանէի, լուռ կէգի,
Զի յիմանայ ուր կէգնի, ուր կէգի.
Երեք տարուս քաղցր է խօսի, դուր կէգի,
Զուս տարում ման կէգի, ճանայպար ելայ:

Հինգ տարում հալոյ խերից տկար ի,
Վեց տարում տանն անօննայկար ի.
Եօթնին ըսկանեցի հգերէկ ճարի,
Ցութնին ուտել, խմել իգայ փոր ելայ:

Ինն տարուս ես լաւ ինձի ճանաչի,
Տասնին լաւ չուր հօրն ու մօրէս պահանջի.
Տասնումէկին տաղ կասէի, կէկանչի,
Տասներկախն փոքր խելքայոր ելայ:

Տասներեք տարում նօր աչէք բացայ,
Տասնեշուրսին լավ ու վագս յիմացայ,
Տասնէհնգին ամէն գործի ջանացայ,
Տասնեվեցին գրիստ ձիայոր ելայ:

Տասնեօժումն թուր ու թփանփ գործ կացի,
Տասնեյութումն թամամ խելքի մատած ի.
Տասներննումն որտեղ ու զին գնացի,
Քսան տարուս մանկաց կնքայոր ելայ:

Քանն հնդում ես ամուսնացայ,
Հանդեց հարսանիքով նոր կին ըստացայ.
Խէր ու խէրիաթըն հաստատ յիմացայ,
Խելքս թամամեցի մակից խօր ելայ:

Երեսուն տարում առուտուր կանի,
Սուտ երդում կուտէի հօդուս զուր կանի.
Ապրանդ կէկիտէի, բորէց բուր կանի,
Սօվդայդարների մէշ դլխայոր ելայ:

Երեսուն հնդում նոր փուշիման ի,
Չեռնէս դուս էր ելի, էլ նոր ինչ անի.
Խնդրեմ Աստված չար խորհուրդս խաբանի,
Ճիճուի պէս ես իմ ջանին բօր ելայ:

Քառայսունին հանդարտեցի, գադաբըի,
Նայեցի ինձանից մեծերու վարքի.
Ասե թէ օրըստօր կերթամ էն շարքի,
Չար գօրծերըն թօղի, ես ադսօր ելայ:

Քառայսունն հնդին փոքր է նվազ ի,
Սիրտս հոգմ էր անում, չի կարում վազի.
Շատ ականջ չիդրի սօհբադ ու սազի,
Հարսանիք մաջիսի նենդայոր ելայ:

Իթսուն տարիս թամամ հալայ սաղ ջանի,
Սիրտս ուզում էր, որ ավալլայ պէս բանի.
Էլ չի կարում, վաստակացի նման ի,
Ջանձըս չի չարչարի, ես այսօր ելայ:

Իթսունն հգում գառ ջանանում ի,
Դուս ի գնում փոքր է, փոքր է բանում ի.
Անջալ իմ տարէկան խարջն հանէի,
Իմ տան համար էտէնց հարդայոր ելայ:

Վաթսունում գադաստանն միտ բերի,
Ժամից ու աղօթ-կից մնացի թերի.
Աղաջեմ առ Տէրն չէ քցի գերի,
Պաճառ էտ վաղում անշնոր ելայ:

Վաթսունի հիգում կեռքիս թափեց,
Խօսքո թօրում ի, լեզուս կլաբեց:
Յիմանում ի, որ աշխարքն ինձ խարեց,
Էնպէս յիմանում ի խելքայոր ելայ:

Եօթանասում հեռուն չէ տեսայ,
Զի կարում ման գէի առանց ի ասայ.
Աչկերըս ցերէկն էլ երիկվան պէս ա,
Հավկուր մարդի նման աչկայոր ելայ:

Եռութանասուն հիգին տվեց նշանս,
Տեսնում ի որ քիչ քիչ մաշվում էր ջանս.
Յիմացայ այսուհետ խարաբ էր բանս,
Բէհուշ ման գէգէի, ընկնայոր ելայ:

Յութսունում ձեռ քաշեցի ջանիցս,
Էի չի կարում դուս գնէի տանիցս.
Ասդ, բնդանի խարաբ չէի բանիցս,
Աէր կենալ, շարժելս մասնայոր ելայ:
Յութսուն հնդում թուլացավ սունս,
Շատ նեղութեան մէջ ի, չէր տանում քունս.

Հայ օրըստօր փոքրանում էր արեւուս,
Տամարներս քաշվեց մէջկայչօր ելայ:

Ընթթսունին հայ միշտ կանչէի Տէրն,
Որ բալքի ուզարկէր հրեշտակներն.
Խնձի չէ խէնայէր հոգէոր սէրն,
Մարմինս. հող հոգով լոյսայոր ելայ:

Ընթթսուն հիգին գառ աչկս ետ էր,
Մարմինս տկար էր, ոտներս փէտ էր.
Այս յունան աշխարիս սիրովն անդէտ էր,
Բարիսանէս զըկեցի ճանփոր ելայ:

Հարուր տարիս թամամ եկաւ բարագտար,
Մալ, գովաթ խաղեայ տվի, չէլաւ ճար.
Հոգիս մարնէս քաշեց ինչքան չարայչչար,
Տէսէք այս կենացէն ես տկլուր ելայ:

Վարդան օվլի հիգ գաղ կտաւ խօստացան,
Քեզ հակցրին, տարան, գրին գերեզման.
Ասին անշարժ կացիր միշէ գատաստան,
Ամէն ինձապէս կենան, ինչպէս որ ելայ:

Հրատարակեց՝ ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆ



ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ

ՅՈՒՆԻ ԳԻՑԱԲԵՆ ՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թագաւորական տան կամ իշխանութեան
Հետ շունը աղերսի մէջ գնելը, մանաւանդ երբ
Խնդիրը արտաքոյ կարգի գէպերու կամ նշա-
նաւոր գէմքերու եւ դիւցազներու վրայ է, հա-
ղուագիւտ երեւոյթ մը չէ մարդկային առասպե-
լակազմիկ իրականութեան մէջ: Այսպէս ըստ
պարսկական աւանդութեան կիւրոս Մեծ իր ըն-
կեցիկ եղած միջոցին շնէ մը կը դիեցուի, մինչեւ
որ հովիւ մը զինք գտնելով իր կնոջ առանձին
խնամքին կը յանձնէ: Հովիւ մէական թեմոս եւ
Ռոմուլոս երկուորեակներն ալ ընկեցիկ կ'ըլլան
եւ կը դիեցուին զայլէ մը՝ որ հոս նախնական
շան փոխանակած է, եւ յետոյ հովիւէ մը կը
գտնուին եւ կ'որդեգրուին: Հովիւ մէական եւ
պարսկական այս երկու առասպելներուն զարմա-
նալի նմանութիւնը ակնյայտնի փաստ է երկուքին
ալ հասարակաց բռնէ մը ծագելուն, որոնք իրենց
տեսագծերով շատ աւելի հին են քան կիւրոս եւ
մինչեւ իսկ թեմոս եւ Ռոմուլոս, վերջիններն եթէ